Սոնա Միսակի Մխիթարյանի ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը» վերտառությամբ ատենախոսության մասին

Կարծիք

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման խիստ արդիական է՝ հաշվի առնելով Եվրոպական Միության աշխարհաքաղաքական և անվտանգային դերակատարության նպատակների գրեթե անխուսափելի ընդլայնումը վերջին տասնամյակում ու այսօր, և այդ համատեքստում ԵՄ-ի ժողովրդավարական հաշվետվողականության ապահովման հրամայականի հանդեպ քննադատությունները ԵՄ քաղաքացիներից ու առանձին անդամ պետություններից, այնպես էլ հաշվի առնելով ԵՄ արտաքին քաղաքականության վրա ազդեցության ձգտող գործընկեր պետությունների շահագրգռվածությունը:

Գիտական որոշ արդյունքեր կարող են վերաբերելի լինել շահերի որոշ խմբերի համար կամ հասարակությունների համար, բայց գիտությունը չի կարող սահմանափակվել ազգային սահմաններով: Սրա վառ ապացույցն է պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որը թեև խիստ կարևոր գործնական նշանակություն կարող է ունենալ՝ ծառայելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական շահերին, բայց և կարևոր ներդրում է Եվրոպական ուսումնասիրությունների, միջազգային հարաբերությունների, պարլամենտարիզմի, ինստիտուցիոնալիզմի, սուպրանացիոնալիզմի, կուսակցական (թե՛ ազգային, թե՛ անդրազգային) քաղաքականության ուսումնասիրություններով զբաղվող ուսանողներիս համար: Սրա գրավականն է ատենախոսի կողմից օգտագործված գրականությունը, որը գերազանց կերպով կիրառել է մինչ այս ստեղծված ինչպես հայկական, այնպես էլ միջազգային գիտական միջավայրերում գիտական հանրության դատին հանձնված գիտելիքը:

Տպավորիչ և առանձնակի խրախուսման է արժանի հեղինակի կողմից տվյալների հավաքագրման հարցազրույցի մեթոդի կիրառումը հետազոտվող կուսակցությունների և խմբակցությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Այն խրախուսելի է ոչ միայն հեղինակի ներդրված ջանքի և ներկայացուցչականության շնորհիվ, այլ նաև այն պատճառով, որ վերջին շրջանում քաղաքագետ ուսանողների շրջանում այս մեթոդը ավելի շատ կիրառվում է փորձագիտական կարծիքի՝ այլ ոչ թե առաջնային տվյալների հավաքագրման նպատակով: Այսպիսով հեղինակը ոչ միայն ստացել է տվյալների մեկնաբանման ավելի լայն դաշտ, ինքնավարություն ու օրիգինալություն, այլ նաև հարստացրել է թե՛ իր աշխատանքի, թե՛ դրա հիման վրա հետագայում ստեղծվելիք ակադեմիական հետազոտությունների առաջնային աղբյուրների բազան:

Կարևոր է ընդգծել նաև հեղինակի կողմից համեմատական մեթոդի արդյունավետ կիրառումը՝ համեմատելի օբյեկտների ընտրության հարցում, տարբերությունների և նմանությունների դուրս բերման և ատենախոսության մեջ դրանց արձանագրելու հարցում, ինչպես նաև, և սա թերևս մեթոդի ամենաարժեքավոր կիրառությունն է՝ տարբերությունների կամ բացառությունների պատճառների վերհանման հարցում՝ ինչպես օրինակ եվրոսկեպտիկ և այլ կուսակցությունների կողմից ԱԼԳ պետությունների ներքաղաքական հարցերում անաչառ միջնորդի դերի ստանձնումը բացատրելով այդ երկրներում անդամ կուսակցություններ չունենալով, կամ որոշ կուսակցությունների կողմից սոցիալական հարցերի շեշտադրումները պայմանավորելը կուսակցական գաղափարախոսությամբ և այլն:

Պաշտպանության ներկայացված աշխատանքի գիտական և գործնական արժեքներից է նաև այն, որ հետազոտության արդյունքները օգնում են կշռադատված մեկնաբանել տարբեր կողմնակալ շահերի խմբերից կողմից տարածվող ու վերահեռարձակվող ԵՄ-ում հնչած տարաբնույթ ելույթները՝ լինեն դրանք առաջին հայացքից հայանպաստ, թե հակառակը: Ջտեղեկացված հանրությանը սրանք հաճախ ներկայցավում են որպես ԵՄ դիրքորոշում և պրոպագանդիստական նպատակներով ծառայեցվում եվրոսկեպցիզմի կամ եվրոպամետության տարածմանը՝ երկու դեպքում էլ մանիպուլացնելով ինչպես ԵՄ-ի

մարգինալ դերը ԵՄ արտաքին քաղաքականության մեջ, փոքրամասնություն կամ բացառություն կազմող պատգամավորների էքսցենտրիկ խոսքերը որպես ընդհանուրի կարծիք ներկայացնելով, այնպես էլ առանց համատեքստի (տվյալ պատգամավորի իսլամաֆոբիա, կրոնական աջ պահպանողականություն, հակառուսականություն, պրոռուսականություն և այլն) դրանց ներկայացմամբ:

Աշխատանքում սահմանվել են գիտականորեն իրագործելի նպատակներ և խնդիրներ, որոնք հետևողականորեն հասցեագրվում են ատենախոսության մեջ: Ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններում: Դրանք հստակ են, համակարգված և բխում են իրականացված հետազոտության արդյունքներից: Վստահ ենք, որ դրանք կարող են ունենալ գործնական ու կրթական նշանակություն, ինչի մասին իրավացիորեն նշում է հեղինակը:

Կատարված հետազոտությունը փաստում է ատենախոսի կողմից ժամանակակից քաղաքագիտական մեթոդների հմուտ տիրապետումը: Օգտագործված գրականությունն ու աղբյուրները համապատասխանում են գիտական բարձր չափանիշներին, ինչպես նաև արհեստավարժորեն հաշվի են առնում հեղինակների, իսկ հետազոտական հարցազրույցների դեպքում՝ զրուցակիցների սուբյեկտիվությունները՝ դրանք ներկայացնելով բացատրող համատեքստերում և հավասարակշռելով գրականության տեսության համակողմանի ուսումնասիրությամբ:

Աշխատությունը քննադատական մոտեցմամբ դիտարկելիս, առանձնացրել ենք հետևյալ հիմնական նկատառումները.

1. Ատենախոսության կշահեր եթե առաջ քաշած խնդիրներում ներառվեր նաև տեսական խնդիր, որը կհարստացներ հարցի ուսումնասիրության տեսական հիմքերը: Թեև աշխատանքի առաջին գլուխը ներկայացնում է հետազոտական օբյեկտի պատմական էվոլյուցիան, իսկ երկրորդ գլուխը անդրադառնում դրա մի շարք առանձնահատկություններին, դրանք, թերևս, չեն ամբողջանում, և թույլ չեն տալիս բացատրել տեսական օրինչափությունների կանխատեսած վերարտադրումը կամ դրանցից շեղումն ու պատճառները: Կրկնելով գրախոսականի նախաբանում նշված միտքը, որ

հեղինակը համեմատական մեթոդը կիրառել է տեղին՝ տեսական ավելի կուռ ապարատի առկայության պարագայում այդ մեթոդի կիրառումով ստացված արդյունքները էլ ավելի հարուստ գիտական նորույթ կապահովեին:

2. Խնդրահարույց կարող է մեկնաբանվել երկրորդ գլխում կիրառված Արևելյան գործընկերություն ծրագրի «ձեռքբերումներն ու ձախողումները» եզրույթները: Որևի երևույթի հաջողություն կամ ձախողում չափելի է ի համեմատ դրված նպատակի, ուստիև ԱլԳ-ի ձեռքբերումը կամ ձախողումը չափելու համար պետք է կիրառվի համեմատական մեթոդ՝ հիմնադրման հիմքում եղած նպատակների և տվյալ ժամանակահատվածում դրանց իրագործման միջև, եթե դրանք չափելի են, ենթարկվում են քանակական կամ որակական համեմատության: Դրանց շուրջ ձեռքբերումի կամ ձախողման մասին քննարկումը վտանգում է դուրս գալ գիտական մեթոդաբանության սահմաններից: Բացի այդ, հաշվի առնելով այն, որ հետազոտության խնդիրները պետք է ծառայեն նպատակին, հարց է առաջանում, թե ինչպես է ԱլԳ ձեռքբերումների և ձախողումների քննությունը նպաստում ատենախոսության նպատակի՝ այն է «Արևելյան գործընկերություն» ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսի վերհանմանը:

3. Ատենախոսության տարբեր հատվածներում առկա են տեքստային կառուցվածքի խնդիրներ՝ տեքստի շարադրման կուռ և հետևողականորեն կիրառված սկզբունքի բացակայություն: Թեև կարծես թե որպես սկզբունք ընտրված է ամեն գլխում կամ ենթագլխում առաջ քաշվող խնդրի քննությունը՝ ըստ կուսակցություն առ կուսակցություն սկզբունքի, սակայն դրանց միջև լրացուցիչ հստակ բաժանումների առկայությունը (օրինակ՝ լրացուցիչ ենթաբաժիններով), այդ թվում թեմայից թեմա անցումների ժամանակ (օրինակ անաչառ միջնորդի հայեցակարգից, բելառուսական ճգնաժամի անցումը և այլն), ինչպես նաև նկարագրվող գործընթացների ժամանակագրական հերթականության հարցում հետևողականությունը կբարելավեին հետազոտության արդյունքների համակարգված ներկայացումը և մտքի տրամաբանական շղթաների կառուցումը՝ ըստ առաջ քաշված

խնդիրների: Տեքստային բացթողում է նաև յուրաքանչյուր գլխում և ենթագլխում հստակ նախաբանի և որոշ դեպքերում ամփոփման բացակայությունը կամ դրանց հպանցիկ ձևակերպումը: Նախընտրելի կլիներ նաև այս նախաբաններում ներկայացնել, թե տվյալ բաժինը հետազոտական որ խնդրի հասցեագրմանն է ծառայելու: Նման մոտեցումը կլուծեր նաև կառուցվածքի հետ կապված վերոնշյալ խնդիրը: Կառուցվածքի հետ կապված վերապահումներին կարելի է դասել նաև աշխատանքի գլուխների ծավալային անհամամասնությունը: Ինչպես նշել ենք առաջին դիտարկման մեջ՝ առաջին և երկրորդ գլուխներում կենտրոնացումը ատենախոսության հիմնական նպատակին ոչ ուղղակի ծառայող թեմաների վրա հանգեցրել է գիտական գլխավոր արժեք ներկայացնող նյութի գերկենտրոնացմանը երրորդ գլխում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է տվյալ գլխի անհամեմատ մեծ ծավալին: Կառուցվածքի ավելի նպատակային տեքստային շարադրման պարագայում թերևս հնարավոր կլիներ խուսափել այս խնդրից և էլ ավելի արդյունավետ ներկայացնել արժեքավոր նորույթներ, որոնք տեղ են գտել երրորդ գլխում:

4. Աշխատանքում ներկայացված դիսկուրսիվ վերլուծությունը վեր է հանում նաև որոշ խոսույթների կամ շեշտադրումների հաճախակիությունը ի համեմատ ուրիշների (օրինակ՝ էջ 66՝ Ռուսաստանի հետ երկխոսության հայեցակարգի հաճախականությունը ԵՍԿ և ՍԴԱԴ դիսկուրսում ի համեմատ ԵԺԿ-ի, էջ 134՝ ԵԱԴ-ի անդրադրածը ԼՂ-ին ի համեմատ այլ կուսակցությունների, էջ՝ 147 ԵՍԿ-ի ու ՍԴԱԴ-ի դիսկուրսում Հայաստանի անդրադարձը ի համեմատություն այլ երկրների, էջ 157՝ ԱլԳ ծրագրի շուրջ ամենահաճախ կիրառվող արժեքահեն իմաստավորումները և այլն): Ոչ բոլոր, բայց որոշ դեպքերում օգտակար կլիներ ներկայացնել քանակական բնույթի այս տարբերությունները ցույց տվող համեմատությունների տվյալները՝ թե ինչպիսի տարբերության մասին է խոսքը:
5. Երկար մեջբերումները հիմնականում զետեղված են առանձին և շեղատառ, ինչը լիովին ընդունելի է, սակայն կան այս ոճից որոշ շեղումներ՝ օրինակ էջ 83, ինչպես նաև որոշ վրիպակներ՝ էջ 30, 48, 55:

6. Թեև ներկայացվում է, որ խոսույթի վերլուծության համար օգտագործվել է քննադատական դիսկուրս վերլուծության մեթոդաբանությունը, աշխատանքը կշահեր, եթե մանրամասնեցվեր մեթոդը՝ որ հեղինակ(ների) մշակումն է օգտագործվել որպես հիմք և ինչով է պայմանավորված եղել կոնկրետ դպրոցի ընտրությունը, ինչպես նաև պարզաբանվեր տվյալ մեթոդաբանությանը ներհատուկ եզրույթների սահմանումները՝ այն իմաստով որոնցով դրանք օգտագործվել են աշխատության մեջ: Օրինակ՝ «իմաստավորում» առանցքային եզրույթի բացատրությունը, կամ առնվազն այն բնօրինակի ներկայացումն ու դրան հղումը, որից թարգմանվել է այն կնպաստեր աշխատանքի մեթոդաբանական ապարատի ամբողջականացմանը:

Ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք այն եզրակացությանը, որ նշված դիտարկումները կրում են առաջարկի բնույթ՝ շահագրգռված լինելով լավարկել հեղինակի կատարած արժեքավոր և պրոֆեսիոնալ կատարված ուսումնասիրությունը: Ինչպես նշում ենք այս գրախոսության նախաբանում, հատկապես տպավորիչ է առաջնային տեղեկատուների հետ հեղինակի իրականացրած հարցազրույցների ծավալն ու խորությունը, դրանց օգտագործումը վերլուծական նյութի մեջ, ինչպես նաև հսակայածավալ և ամփոփոիչ տեքստային նյութի կոնտենտ անալիզը, որոնք էլ, կարծում ենք, հիմնական արժեքն ու նորույթն են գիտական աստիճանի հայցման համար ներկայացված այս աշխատանքի: Վերոնշյալ քննադատական նկատառումները չեն նսեմացնում այն լայնածավալ ու կարևոր աշխատանքը, որը կատարվել է հեղինակի կողմից, և որը լրացնում է թեմայի շուրջ առկա հսկա բացը ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային գիտական միջավայրում: Աշխատանքը կարևորագույն ներդրում է ԵԽ-ի հետ աշխատող հայկական ցանկացած կառույցի համար և դրա արդյունքների տեղին կիրառումը կարող է բազմակի բարձրացնել նման աշխատանքի արդյունավետությունը: Հեղինակը լիովին կատարել է իր առջև դրված նպատակն ու խնդիրները՝ տալով բարձրորակ գիտական վերջնարդյունք:

Հաշվի առնելով վերոնշված հանգամանքները՝ կարծում ենք, որ ներկայացվող աշխատանքը լիովին համապատասխանում է գիտական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Գրախոսեց՝ Նարեկ Սուքիասյան

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի, Մշակույթի և քաղաքակրթական
հետազոտությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
ք.գ.թ.
09.09.2024թ.

ԵՊՀ գիտական քարտուղար՝ Ռ. Հ. Հովհաննիսյան